4Բ1 6 ԺԲ-6

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԸ

ՀԵՐՄԵՍ

ՍՏ. ԶՈՐՅԱՆ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԸ

154
Ա II 38318

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԵՑ Մ. ԱՐՈՒՏՅՈՒՆՅԱՆ

№ 5.

„ՀԵՐՄԵՍ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1927

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՄ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ.
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 913Բ
ՏԻՐԱԺ 2000

25

արնիգեղցի Պողոսը քառասուն տարեկան եր՝ դեռ քաղաք չեր տեսել։ Մի անգամ, ինչպես եր պատահել, ձեռք եր գցել աղվեսի մի մորթի։ Ուզում եր ծախել՝ գյուղում առնող չկար։ Հարևանները խորհուրդ տվին՝ տանի քաղաք։

— Քաղաքում լավ գին կտան, ասին,—վերկալու գնա։ Մի բան վոր հեռու չի. ըստեղից Երևան յերկու որվա ճամպա յե։ Համ կը ծախես լավ գնով, համ էլ տանդ համար եժան բան-ման կառնես։

Այսպես՝ աղվեսի մորթին պատճառ յեղավ, վոր Պողոսը գնա քաղաք։ Յերկու որում, իսկապես, հասավ Յերևան, մորթին ծախեց շուկայում ու այն ե՝ ուզում եր վերադառնալ—փողոցում հանդիպեց մի հայրենակցի։ Բարևեցին, խոսեցին դեսից-դենից և, վերջը, հայրենակիցը, վոր կառապան եր քաղաքում, հրավիրեց Նրան իր տուն։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՆՑԱՍԵՆՅԱԿ ԳՐԱԴԱՐԱՆ

— Մութն ընկնում է, ասավ,—արի գիշերը կը քնես, առավոտը կերթաս։

Պողոսը համաձայնեց։

Գնացին տուն։ Մինչև հասնելը՝ մութն ընկավ, այնպես վոր յերբ տուն մտան, ելեքտրական լամ-

պը վառվում եր և ինքնայեռը խլթխլթում եր սեղանի վրա։ Կառապանի կինն իսկույն սեղանը սարքեց. հաց բերեց, թեյ բերեց և նստեցին ընթրիքի։

Բոլոր այդ ժամանակ՝ մինչև սեղան պատրաստելը, Պողոսը նայում եր ելեքտրական լամ-

պին։ Նայում եր բերանը բաց, զարմացած և ամենևին ուշ չեր դարձնում հացի սեղանին։

— Հաց կեր, խնամի Պողոս, ասավ կառապանը,—ինչ կա, վոր մտիկ ես անում եղպես։

— Ես ձեր լամպին եմ նայում, ախպեր. մի մատ շուշա ու եսքան լի՞ս։

— Բա լեքտրական լամպը վոնց գիտես,—պարծեցավ կառապանը։

— Խի՞ վոր. սրա մեջ ուրիշ նավթ եք ածում, թե պատրուքն է լավը։

— Չե, ասավ կառապանի կինը.—վոչ նավթ ենք ածում, վոչ ել պատրուք ունի. իրան-իրան վառվում է ելի։

— Վոնց թե,—զարմացավ Պողոսը,—առանց նավթի՞ ու պատրուքի՞...

— Հա՛, ի հարկե, առանց նավթի ու պատրուքի։ Բա լեքտրական լամպը վոնց գիտես,—նորից պարծեցավ կառապանը։

— Հրաշք բան ա, ախպեր,—քրթմնջաց Պողոսը նորից լամպին նայելով։ Ու նայեց յերկար, նայեց զարմացած և, վերջը, հեռաքրքրվեց, թե վո՞րտեղից են առնում արդյոք այդ հրաշք լամպերը։

— Խանութներից, պատասխանեց կառապանը։

— Խանութներից... թանգ ա, եժան։

— Եժան. մի մանեթ...

— Մի մանեթ... «Ես լավ է, մտածեց Պողոսը, մի հատ էլ յես առնեմ, հետս տանեմ, էլ վոչ նավթի փող կը տանք, վոչ պատրուքի»։

Եղպես էլ արավ։ Յերբ առավոտը դուրս յեկավ հայրենակցի տնից, խանութներից մեկում գնեց էլեքտրական մի լամպ և ճամպա ընկավ դեպի Պարնիգեղ։

ս լավ եկավ, մտածում էր Պողոսը ճանապարհին.— ծախսերից կը թեթևանանք, կինս էլ կուրախանա»։

Յերբ հասավ տուն, հարևանները հավաքվեցին գլխին իմանալու, թե աղվեսի մորթին քանիսով է ծախել, քաղաքում թանգությունն է, եժանությունն և կամ Պողոսն ինչ է բերել։

Պատասխանելով գանգան հարցերի, Պողոսը, վերջապես, խուրջինից հանեց ելեքտրական լամպը։

— Ա՛յ, ինչ եմ բերել—ասավ, լամպը գլխից բարձր բռնելով, վոր բոլորը տեսնեն։

— Դա ի՞նչ բան ա,—հարցրին գյուղացիք.—եղ տանձի նման շուշեն։

— Լեքտրական ա,—բացատրեց Պողոսը։

Գյուղացիները բան չհասկացան, թե «լեքտրականն» ինչ է։ Այդ ժամանակ Պողոսը բացատրեց, վոր «լեքտրականը» լամպ է և առանց նավթի, պատրուգի իրան-իրան վառվում է։

— Զե մի—պոզեր,—ծիծաղեցին գյուղացիք։

— Հիմի վոր վառվի՝ կը տեսնաք՝ պոզեր ա թե լամպ,—պարծեցավ Պոզոսը և կնոջը հրամայեց վոր մի թել բերի։

Յեվ յերբ կինը թելը բերեց, նա լամպը թելով կապեց և կախեց ոճորքից՝ ճիշտ այնպես, ինչպես քաղաքում կառապանի տանն եր կախված։

— Ա՛յ հիմի կը տեսնաք թե ինչ ա,—ասավ նա գործը վերջացնելուց հետո, ցած իջնելով։

Գյուղացիները մոտեցան լամպին, նայեցին, հոտ քաշեցին (նավթի հոտ չեր գալիս) և սպասեցին վառվելուն։

— Բա ես խի չի՞ վառվում,—ասավ մեկը։

— Նա իրա ժամանակը գիտի,—պատասխանեց Պոզոսը.—յերբ վոր ժամանակը գալիս ա—իրան-իրան վառվում ա։

— Ա՛յ հրաշք... Բա ժամանակը յե՞րբ ա...

— Ճրագվառոցին։ Հենց վոր ճրագները վառում են, սա էլ վառվում ա։

Մինչև ճրագվառոցը թեև բավական ժամանակ կար, բայց հարևանները չհեռացան։ Նրանց վրա ավելացան նորերը, և բոլորը միասին՝ լամպի շուրջը խմբված, սպասեցին մինչև ճրագվառոց։

Սպասեցին այնքան, մինչև վոր գյուղի բոլոր տներում մեկը մյուսի յետևից վառվեցին նավթի լամպերը, ճրագները։ Բայց «լեքտրականը» դեռ չեր վառվում։

— Բա ես վո՞նց ա, ժամանակը չեկավ։

— Դեռ հլա չե։ Երևանում ուշ ա մթնում,—պատասխանեց Պոզոսը,—մի քիչ էլ սպասեք՝ հիմի կը վառվի...

Անցավ մի ժամ, գյուղը բոլորովին մթնեց, նրա հետ և Պողոսի տունը։ Խավարում չմնալու համար՝ կինն ուզեց նավթի լամպը վառել՝ Պողոսը չթողեց։

— Զուր նավթ մի փչացնիլ, ասավ.—հիմի վորտեղ վոր է կը վառվի...

Սպասեցին ելի մի ժամ, յերկու ժամ—ելեքտրականը չվառեց։

Հարևանները կամաց-կամաց սկսեցին ցրվել տրտնջալով.

— Մենք ել կարծում էյինք թե՝ բան ա։

— Ձեր մեջ վառած ճրագն ել կը հանգչի, ուր մնաց թե հանգածը վառվի—պատասխանեց Պողոսը և մտածեց, վոր հարևաններն, անշուշտ, աչքով տվին լամպին, յեթե վոչ ինչու չպիտի վառվեր։

— Հա, հա, աչքով տվին, ասում եր նա կնոջը,—անպատճառ աչքով տվին...

Զինգ տարի հետո, յերբ Պարնի գեղի մոտիկ քաղաքում ելեքտրական կառուցին և նրա առատ լույսից բաժին ընկավ մյուս գյուղերի հետ նաև Պարնիգեղին,—Պողոսը, նրա հետ և մյուս գյուղացիները շատ բան հասկացան... Հասկացան, թե ինչ բան է ելեքտրական լույսը, հասկացան, վոր ելեքտրական լամպը ինքն-իրեն չի վառվում, այլ նրան լույս են տալիս այն ջրերն ու մեքենաները, վոր աշխատում են քաղաքի ձորում։

A 383/18
ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼԸ . . . 45 կոպ.
2. ԾՈՎԱՆԸ . . . . . 30 »
3. ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆ . . . . 25 »

ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

1. ԿԱՏՈՒՆԵՐ
2. ԽՈՒԺԱՆԸ
3. ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԳԱՐԱՆ
ՍԿԱԶԵՍՈՒՅ.